ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀՀ-ԼՄԱՀ-ՄԿՕՀՖ-18/12

ք. Ստեփանավան 13, ապրիլ, 2018թ.

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» Համայնքային կառավարչական հիմնարկը, այսուհետ՝«Պատվիրատու», ի դեմս համայնքապետ՝ Միքայել Ղարաքեշիշյանի մի կողմից, և Ա/Ձ Սերգեյ Ֆլջյանը, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուի հանձնարարությամբ Կատարողն իրականացնում է Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի զբոսայգում մանկական խաղասարքերի տեղադրման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վճարել դրա դիմաց:

1.2 Աշխատանքը կատարված է համարվում Պատվիրատուի կողմից հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից:

1.3 Աշխատանքի կատարման ժամկետ է սահմանվում 2018թ. ապրիլի 14-ից մինչև 2018թ. ապրիլի 19-ը ներառյալ:

1.4 Աշխատանքը կատարվում է Կատարողի ուժերով, միջոցներով և նյութերով:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Սույն Պայմանագրի արժեքը կազմում է 200՝000 (Երկու հարյուր հազար) դրամ ներառյալ բոլոր հարկերը:

2.2 Պատվիրատուն պայմանագրային գումարի վճարումն իրականացնում է Կատարողի կողմից սույն Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորությունների լիարժեք կատարման դեպքում (ինչը ներառում է Պատվիրատուի կողմից հայտնաբերված և Կատարողին ցույց տված բոլոր տեսակի թերությունների և չկատարումների վերացումը) Պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձման-ընդունման ակտի (եզրափակիչ ակտի) հիման վրա, այդ ակտի ստորագրումից հետո 10 (տաս) աշխատանքային օրերի ընթացքում:

3 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պատվիրատուն իրավունք ունի Կատարողի աշխատանքի ընթացքի և որակի անվերապահ և անընդհատ ստուգման, առանց խոչընդոտելու վերջինիս գործունեությունը:

3.2 Կատարողը պարտավոր է ծառայությունները մատուցել սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում և պատշաճ որակով:

4 ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխել: Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծարելու Պայմանագիրը, այդ մասին տեղյակ պահելով մյուս կողմին:

4.2 Աշխատանքի կատարման ժամկետը Կատարողի կողմից խախտելու դեպքում նա պարտավոր է տուգանք վճարել Պատվիրատուին Պայմանագրի արժեքի 0.2%-ի չափով Պայմանագրի ծրագրված ավարտի օրվա նկատմամբ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, եթե երկուստեք համաձայնությամբ և հիմնավորված պատճառներով Պայմանագրի ծրագրված ավարտի օրը չնշվի լրացուցիչ: Հաշվարկված տուգանքը չի կարող գերազանցել պայմանագրային արժեքի 10 %-ը:

4.3 Սույն Պայմանագրի 2.1 կետով նախատեսված վճարումն ուշացնելու դեպքում Պատվիրատուն վճարում է տույժ ուշացված գումարի 0.2%-ի չափով, յուրաքանչյուր ուշացած օրվա համար, բայց ոչ ավել քան վճարման ենթակա գումարի 10%-ը:

5 ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն Պայմանագրի պայմանները ենթակա են փոփոխության երկկողմանի համաձայնության դեպքում, ինչը վավերացվում է համապատասխան համաձայնագրով:

5.2 Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերը ղեկավարվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

5.3 Սույն Պայմանագիրը կազմված է 2 (երկու) օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

6 ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Պատվիրատու»	«Կատարող»
«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» Համայնքային կառավարչական հիմնարկը ՀՀ, Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Սոս Սարգսյան 1 ՀՎՀՀ 06954104 Հ/հ 900252320024 ՀՀ ֆն գործառնական վարչություն	Ա/Ձ Սերգեյ Ֆլջյան ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի Մուշ 2 թաղ., 8-1 շենք, բն. 5 ՀՎՀՀ 84710254 Հ/հ 220060813635000 «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ «Շիրակ» մասնաճյուղ
Միքայել Ղարաքեշիշյան	Սերգեյ Ֆլջյան
ստորագրություն	ստորագրություն